

Պատմուածքը գրուած է այն կոկ, վարժ և փոքր ինչ դժգոյն ոճով, որ յատուկ է Վ. Նեմիրովիչ-Դանչենկօին:

Թարգմանութիւնը անյաջող է: Պատահում են այսպիսի դարձուածքներ. «վերմակի ծայրերը գլորել», «մաքուր ճշմարտութիւն եմ ասում», «մի աղամարդ զինուորական խմորից» և այլն:

Տ. Յ.

Լ. Ն. Տոլստոյ. «ԱՍՏՈՒՆՈՒՆ, ԹԷ ՄԱՄՈՆԱՅԻՆ». Թարգմ. Մամբրէ վարդապետ. 22 եր. գ. 2 կտպ. Վաղարշապատ, 1903.

Լև Տոլստոյի այս գրքոյկի մասին մենք արդէն խօսել ենք «Մուրճի» այս տարուայ № 3 գրքում պ. Յով. Ստեփանեանի Թարգմանութեան առթիւ: Մամբրէ վարդապետի Թարգմանութիւնն անպայման աւելի յաջող է:

Տ. Յ.

Theodor Herzl: „ALTNEÜLAND“, Roman, Leipzig, 1902.—Թէոդոր Հերցլ. «Հին-Նոյր երկիր», վեպ. Լայպցիգ, 1902.

Վերոյիշեալ վիպական աշխատութիւնը, որ գերմանական մամուլի կողմից լուրջ ուշադրութեան արժանացաւ, պատկանում է յայտնի դոկտ. Թ. Հերցլին, որի անուան հետ կապում է մի ամբողջ շարժումն իր ծրագրով հանդերձ: Այդ շարժումն է սիոնիզմը, որի մասին յաճախ գրուել է «Մուրճ»-ում:

Թ. Հերցլի առաջին նշանաւոր աշխատութիւնը, որ լոյս տեսաւ 1896 թ., կրում էր „Der Judenstat“ (Հրէական տէրութիւնը) վերնագիրը: Այդ աշխատութեամբ հեղինակը քարոզում էր այն գաղափարը, որ հրէաներն իբրեւ մի պատմական ազգ՝ արժանի են իրանց սեպհական հայրենիքն ու անկախ տէրութիւնն ունենալու: Այդ աշխատութեամբ հեղինակն ահագին շանակութիւն ստացաւ սիոնիստական շարժման վերաբերմամբ, որովհետեւ նա դրանով արտայայտեց այդ շարժման նպատակն ընդհանրապէս և մասնաւորապէս սիոնիստների գլխաւոր ցանկութիւնն ու յոյսերը: «Եթէ նորին վեհափառութիւն սուրբանք մեզ տայ Պաղեստինը, այն ժամանակ մենք դրա փոխարէն խոստումով կը պարտաւորուենք Տաճկաստանի քայքայուած ֆինանսները կանոնաւորելը»: Եւ այն թէ ինչ անհնարին բան էր երազում այն ժամանակ սիոնիզմի պարագլուխ Հերցլը, կարծե-